

**ՕժԻՏԸ ԵՎ ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ  
ԿԻՒԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԵՎ  
ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

*Բանալի բառեր՝ Օժիտ, միջնադարյան իրավունք, Կիլիկյան Հայաստան, Սմբատ Սպարապետ, Մխիթար Գոշ, դատաստանագիրք, ամուսնական ունեցվածք, կապիտալ, մասնավոր սեփականություն, Վենետիկ, Ջենովա:*

Օժիտը և ամուսնական ունեցվածքի խնդիրը միջնադարյան առօրեականու-  
թյունը պատկերավոր դարձնող, ամուսնական իրավունքը բնորոշող համակե-  
ցական մշակույթի բաղադրիչներից են, որոնք տարբեր ձևերով արտահայտված  
են ինչպես միջնադարյան եվրոպական, այնպես էլ Արևելքի իրավական իրակա-  
նության մեջ: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է զարգացած միջնադարի  
ավատատիրական հարաբերություններով պայմանավորված միջավայրերին,  
որոնցում մասնավոր սեփականության դերը, այդ թվում նաև ամուսնական՝ ժա-  
մանակի ընթացքում ավելի շեշտադրված նշանակություն է ստացել թե՛ իրավա-  
կան փաստաթղթերում ու օրենսգրքերում, և թե՛ առօրեականության մեջ:

Պատմության ընթացքում մարդկային փոխհարաբերությունների, համակե-  
ցության, սոցիալ-հասարակական կացութաձևերի էությունը պայմանավորել են  
կապիտալի այն տեսակները, որոնք բնորոշ են եղել տվյալ ժամանակին: Օրի-  
նակ, XIX-XXI դդ. տեխնոլոգիական հեղափոխական փոփոխությունների արդ-  
յունքում տեղի ունեցան կապիտալի ձևի ու բովանդակության արմատական  
ձևափոխումներ, ոչ նյութականը՝ միտքը, գաղափարը, սկսեց ավելի ու ավելի  
տիրապետել որպես կապիտալի տեսակ: Իսկ միջնադարյան ավատատիրական  
իրականության մեջ մարդու համար կապիտալի տեսակներն անհամեմատ սա-  
կավաթիվ ու սահմանափակ էին. առանցքայինն ու հիմնականը հողն էր, որն էլ  
պայմանավորում էր մարդկային համակեցության, սոցիալ-տնտեսական, հասա-  
րակական հարաբերությունների համապատասխան ձևն ու բնույթը:

Զարգացած միջնադարի ընթացքում, հատկապես միջերկրածովյան ու սևծովյան ավազաններում, Մերձավոր Արևելքում, ինչպես նաև Մետաքսի ճանապարհի երկայնքով մինչև Չինաստան ու Հնդկաստան փաստացի ձևավորվել էր առևտրատնտեսական խոշոր ցանց, որի գլխավոր շարժիչ ուժը միջազգային առևտուրն էր: Արդեն XII դարից իտալական մի շարք քաղաքներում՝ Սիենայում, Ֆլորենցիայում սկսեց ձևավորվել բանկային համակարգ, որը խորքային փոփոխություններ էր բերում ֆինանսադրամական հարաբերություններում, կապիտալի բնույթի ու բովանդակության մեջ: Տվյալ ժամանակի հաղորդակցության միջոցների պայմաններում, հարաբերականորեն կարճ ժամանակամիջոցում՝ արդեն XIII դ. երկրորդ կեսին, ձևավորվել և զարգանում էր միջազգային առևտրային գործարքների, փոխառությունների այնպիսի համակարգ, որը միմյանց հետ էր կապում մի կողմից Կիլիկյան Հայաստանն ու սևծովյան ավազանը, մյուս կողմից՝ Կատալոնիան և Անգլիան: Բանկերը, մասնավորապես Ֆլորենտականները, որոնցից խոշորագույններն էին Բարդի և Պերուցցի ընտանիքներին պատկանող բանկային տները, իրենց գործակալություններն ունեին և ֆինանսական փոխհոսքեր էին ապահովում ամբողջ միջերկրածովյան ու սևծովյան ավազանների պետությունների, արևմտաեվրոպական շատ քաղաքների միջև, ինչպես նաև ֆինանսավորում էին աշխարհաքաղաքական մեծ ծրագրեր<sup>1</sup>: Տնտեսական կապիտալը, որի գործընթացները մինչ այդ մեծ մասամբ հիմնված էին հողի, հողատիրության վրա, դառնում էր ավելի լողացող, բազմաբնույթ, ըստ այդմ՝ փոխվում էին նաև կապիտալի հանդեպ մարդկանց վերաբերմունքը, ընկալումներն ու օգտագործման ձևերը:

Երբ XII դ. վերջին Լևոն I (որպես իշխան՝ Լևոն II – 1187-1198, որպես թագավոր՝ 1198-1219) Մեծագործը պետությունը միավորեց Միջերկրական ծովի հյուսիսարևելյան ափի մի հսկայական հատված, Կիլիկյան Հայաստանը արագորեն ներգրավվեց ժամանակի ֆինանսատնտեսական հարաբերությունների ամենազարգացած՝ միջերկրածովյան համակարգին: Արդեն XIII դարի երկրորդ կեսին, Կիլիկյան Հայաստանում լիարժեքորեն ներգրվել և գործում էր միջերկրածովյան ավազանի պետություններում գործող ֆինանսադրամական, առևտրային գործառույթների համակարգի ողջ գունապնակը: Այսպիսի Բարսելոնա առևտրային ուղևորության մեկնող վաճառականն ապրանքներ գնելու նպատակով կանխիկ գումարի փոխարեն իր հետ վերցնում էր ընդամենը ստացականի թուղթ՝ իր բոլոր հավաստիքներով և դրա հիման վրա ստանում կանխիկ գումար՝ արդեն ժամանման քաղաքում առևտրային մեկ այլ գործակալից: Այդ մասին են վկայում Կիլիկիայի քաղաքներում, հատկապես Այասում կազմված տասնյակ

<sup>1</sup> E. Hunt, *The Medieval Super-companies. A Study of the Peruzzi Company of Florence*, Cambridge, 1994.

հազարավոր նոտարական գործերը, որոնք ժամանակին տեղափոխվել և առ այսօր պահվում են իտալական, ֆրանսիական, իսպանական քաղաքների արխիվներում<sup>2</sup>: Կիլիկիայում իրենց ներկայացուցչություններն ունեին այդ նույն ֆլորենտական և իտալական այլ քաղաքների բանկային տներն ու առևտրային ընկերությունները: Առևտրատնտեսական միջազգային հարաբերությունների մեջ այդպիսի լայն ներգրավվածությունն անխուսափելիորեն ձևափոխման էր ենթարկելու կապիտալի, ունեցվածքի հանդեպ Կիլիկյան Հայաստանում ապրող մարդու վերաբերմունքն ու այն կիրառելու ձևերը: Պատահական չէ, որ XIII դ. վերջին Մխիթար Գոշի գրած «Դատաստանագիրքը» արդեն XIII դ. կեսերին, փաստորեն, չէր համապատասխանում նոր, շատ փոխված իրողություններին, որոնցում հայտնվել էր Կիլիկյան Հայաստանը:

Կիլիկյան միջավայրում օժիտը և ամուսնական ունեցվածքը (անշարժ կամ շարժական գույք), կապիտալի ձևեր էին, որոնց ուսումնասիրությամբ հնարավոր կլինի ներկայացնել ոչ միայն օժիտի և ամուսնական ունեցվածքի զուտ նյութական տեսականին, այլ նաև, դրանց օրինակով Կիլիկյան Հայաստանում սոցիալ-հասարակական համակեցության մեջ կապիտալի նշանակությունն ու փոխակերպումները: Արդյունքում հնարավոր կլինի ավելի բովանդակային ու հստակ դարձնել Կիլիկիայի հայ իրականության մեջ զարգացած ավատատիրության ձևավորմանն ու զարգացմանը բնորոշ պատմական համատեքստը:

Միջնադարի հայկական իրավական փաստաթղթերում, «Կանոնագիրք հայոց»-ից մինչև Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը», ակնհայտորեն նկատելի է կրոնի ու եկեղեցու ազդեցությունից իրավունքի և օրենքների աշխարհիկացման աստիճանական ընթացք: Այս փոխակերպումները դիտարկելու համար բացառիկ են ամուսնալուծություններին, ամուսնական ունեցվածքի բաժանմանն ու օժիտին վերաբերող իրավական կետերը<sup>3</sup>: Ի դեպ, նկատի չի առնվում, որ, օրինակ, Սմբատի «Դատաստանագիրքն» իսպառ զերծ էր կրոնական ազդեցությունից, որը շարունակում էր պահպանել իր հզոր ազդեցությունը հենց միայն այն փաստով, որ Կիլիկյան Հայաստանի մեծ դատավորի պաշտոնը պատկանում էր եկեղեցուն:

<sup>2</sup> L. Balletto, *Notai Genovesi in Oltremare, atti rogati a Laiazzo da Federico di Piazzalunga (1274) e Pietro di Bargone (1277, 1279)*, Genova, 1989. Զ. Վևորյան, Կիլիկիայի հայկական պետությունը միջերկրածովյան առևտրի համակարգում (XIII-XIV դդ.), Երևան, 2015, էջ 88-105:

<sup>3</sup> Մխիթար Գոշ, *Դատաստանագիրք*, Երևան, 1975, էջ 37-40, 72-77, 105, 107-108, 309-312, 343, 347: Смбат Спарпет, *Судебник*, составление текста, перевод с древнеармянского, предисловие и примечания А. Галстяна, Ереван, 1958 (на русском и армянском языках), сс. 88-90:

Ինչպիսի՞ կազմութիւն է ունեցել Կիլիկյան Հայաստանում տարբեր խավերին պատկանող կանանց օժիտը. իրավական ինչպիսի՞ ձևակերպում և նշանակութիւն է այն ստացել օրենսգրքերում, նոտարական գործերում և իրավունքի այլ փաստաթղթերում: Ի՞նչ նշանակութիւն է ունեցել ունեցվածքն ամուսնական իրավական կարգավորումներում, ամուսնալուծութեան պարագայում դրա բաժանումը՝ կախված ամուսնալուծութեան հանգամանքներից:

Թե ինչ կազմութիւն կարող էր Կիլիկիայում ունենալ ամուսնական ունեցվածքը, այդ թվում նաև օժիտը, կարող ենք մասնավորապես տեղեկանալ Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» «Վասն այրուկնաց ամուսնութեան» («Ամուսինների ամուսնական իրավունքների մասին») հոդվածից, որում հիշատակվում են ամուսինների միջև բաժանվող հագուստ, սպիտակեղեն, տարբեր տեսակի անասուն, ընդ որում, եթե կենդանիներին կինն է ժամանակին բերել որպես օժիտ, ապա վերջինս կարող է հետ վերցնել, սակայն ամուսնութեան ժամանակամիջոցում դրանցից ծնված կենդանիները բաժանվելու էին հավասարապես<sup>4</sup>:

Արդեն XIII դ. երկրորդ կեսին Կիլիկյան Հայաստանում, հատկապես Այասում, հաստատվել էին իտալական, ֆրանսիական քաղաքների և այլ ծագում ունեցող հարյուրավոր վաճառականներ, որոնք հաճախ մինչև կյանքի վերջը բնակվում էին Կիլիկյան Հայաստանում: Բնականաբար, նման տեղական ժամանակով բնակվելու պարագայում, նրանցից շատերն ամուսնանում էին հայուհիների հետ: Օտարերկրացու հետ հայուհու ամուսնութեան ուշագրավ մասնամասներ է պարունակում 1277 թ. սեպտեմբերի 27-ին ջենովացի Յանուչինո դե Դոմոյի համար կազմված կտակը, որտեղ մեր հետազոտութեան համար առանցքային է հետևյալ հատվածը. *Item volo, iubeo et ordino quod Alixia, uxor mea habeat et habere omnia iura et rationes suas, de quibus fit mencio in instrumento **dotali in litteris armenis** (ընդգծումը՝ Զ. Գ.)*. *Reliquorum bonorum meorum, mobilium et immobilium, mihi heredem instituo Anfelixiam filiam meam...*<sup>5</sup>: Այսինքն, կտակում Յանուչինոն պատվիրում է նոտարական գործակալին ամրագրել այն փաստը, որ իր կինը՝ Ալիսը (Ալիսի հայուհի լինելը հաստատվում է այն փաստով, որ նրա օժիտի փաստաթուղթը գրված է եղել հայերեն՝ *dotali in litteris armenis*), բոլոր իրավունքներն ունի իրեն հասնող օժիտի և սեփականութեան հանդեպ, սակայն դե Դոմոն շարժական և անշարժ իր ողջ գույքի (*bonorum meorum, mobilium et immobilium*) ժառանգորդ նշանակում է դստերը<sup>6</sup>:

<sup>4</sup> Сѣбат Спарает, Судебник, с. 84.

<sup>5</sup> L. Balletto, Notai Genovesi in Oltremare, B, № 25.

<sup>6</sup> Նույն տեղում, B, № 25:

Ապահարզանը կամ ամուսնալուծությունը, դրա իրականացման ընթացակարգը, կարևորագույն ցուցիչներ են, բացահայտելու ինչպես Կիլիկյան Հայաստանի, այնպես էլ միջնադարյան արևմտաեվրոպական իրավունքի և օրենսգրքերի աշխարհիկության աստիճանը: Ուշագրավ է, որ ինչպես Կիլիկյան Հայաստանում, աշխարհիկացման նման միտումներ նկատվում են նաև նույն ժամանակաշրջանի Անգլիայում և Ֆրանսիայում, որտեղ ամուսնալուծություններն իրականացվում էին թե՛ եկեղեցական, և թե՛ աշխարհիկ կանոնների հիման վրա, որոնցում ևս առանցքային նշանակություն է տրվել ունեցվածքի բաժանմանը<sup>7</sup>:

Ա. Սուբիասյանը կարծում է, որ Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը» ձգտում էր ամուսնաընտանեկան հարաբերությունների իրավական բնագավառը ենթարկել պետությունը և աշխարհիկ իրավագործությանը: Միևնույն ժամանակ, ըստ նույն պատմաբանի՝ Մխիթար Գոշի «Դատաստանագիրքի» պարագայում, նշյալ հարաբերություններն ամբողջությամբ գտնվել են եկեղեցական իրավասության ներքո<sup>8</sup>: Անդրադառնալով օժիտն արտահայտող միջնադարյան տերմինների ստուգաբանությանը, Ա. Սուբիասյանը, մեծ մասամբ հիմնվելով Ն. Ադոնցի տեսակետի վրա՝ նշում է, որ Ներսես Համբրոնացու 1197 թ. թարգմանած ասորահոմեական «Դատաստանագիրքը», որտեղ հիշատակվում են *dos* (թարգմանության մեջ՝ «պուոյզ») և *donatio* (թարգմանության մեջ՝ «տուայր») տերմինները, փոխարինելով հայերեն «օժիտ»-ին և «վարձանք»-ին, Սմբատ Սպարապետն է իր «Դատաստանագրքում» մտցրել շրջանառության մեջ: Եվ, չնայած Մխիթար Գոշի մոտ էլ դրանք առկա են, սակայն «տուայր»-ը և «պուոյզ»-ը, ըստ Ա. Սուբիասյանի՝ Գոշի «Դատաստանագիրք» ներմուծվել են հետագայում, այլ խմբագիրների կողմից<sup>9</sup>: Ուշագրավ է, որ «պուոյզ»-ը հունարենից (ΠΡΟΙΚΑ) փոխառություն է և նշանակում է օժիտ, որն այդ իմաստն ունի արդի հունարենում: Սակայն, Սուբիասյանը նշում է *dos* կամ *donatio* լատիներեն բառերը, որոնք ներկայացնում է որպես հունարեն<sup>10</sup>: *Dos* և *donatio* բառերն իսկապես նշանակում են օժիտ, սակայն ոչ թե հունարեն, այլ լատիներեն: Ավելին, Ն. Ադոնցը, որի աշխատության վրա է հիմնվել Ա. Սուբիասյանը, «պուոյզ» և «դոս» տերմինների դիմաց նշում է ոչ թե, որ դրանք հունարեն են, այլ, համա-

<sup>7</sup> Van Melkebeek-Vleeschouwers M., *Separation and Marital Property in Late Medieval England and the Franco-Belgian Region*, (M. Korpiola, Regional Variations in Matrimonial Law and Custom in Europe, 1150-1600), Brill, 2011, p. 78-79, 85.

<sup>8</sup> Ա. Սուբիասյան, *Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն*, Երևան, 1978, էջ 289:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 295-296:

<sup>10</sup> Նույն տեղում:

պատասխանաբար, հունահռոմեական, այսինքն՝ մեկը հունարեն է, մյուսը՝ լատիներեն<sup>11</sup>: Օժիտի լատիներեն անվանումներին (*dos, docium*) կարելի է հանդիպել XIII դ. երկրորդ կեսին Կիլիկյան Հայաստանի Այաս քաղաքում շենովացի նոտարական գործակալների կազմած գործերում<sup>12</sup>: Զ. Քիրշները փաստում է, որ օժիտի հռոմեական *dos* տերմինը XII դ. կրկին հայտնվեց արդեն զարգացած միջնադարի իտալական իրավական ձևակերպումներում՝ դրանցից աստիճանաբար դուրս մղելով գերմանական *Morgengabe*-ը, որը փեսայի նվերն էր հարսին՝ ամուսնությունն իրականացնելու համար: Հարկ է նկատել, որ ըստ Զ. Քիրշների՝ օժիտի *dos* ինստիտուտի հռոմեական ավանդույթի հաղթանակը գերմանական *Morgengabe*-ի հանդեպ հսկայական հետևանքներ ունեցավ առհասարակ սոցիալ-հասարակական հարաբերություններում և տնտեսական գործառույթներում, ինչպես նաև ունեցվածքի տնօրինման և օտարման պարագաներում<sup>13</sup>: Ա. Սուքիասյանը փորձում է հակադրվել եվրոպական հայագետներ Յ. Կարստի, Դարեստի և Կոհլերի մոտեցումներին, որոնք հիմնված են Բյուզանդիայի կայսր Հուստինիանոսի (527-565) էդիկտների ու նովելլաների վրա, առ այն, որ հայերն ունեցել են կանանց «զնման» ինստիտուտ, որն այնուհետև դարձել է ընծա, իսկ օժիտի ինստիտուտը, ըստ Կարստի՝ խորթ է եղել հայերին և հայտնի չէ, թե նրանք որտեղից են այն վերցրել<sup>14</sup>: *Morgengabe*-ի առկայությունը լույս է սփռում այս հարցի վրա, քանի որ այն փաստում է, որ օժիտի փոխարեն փեսայի կողմից հարսին ընծա տալու ինստիտուտը գործել է Արևմտյան եվրոպայում ընդհուպ մինչև XII դարը: Դա վկայում է, որ ամուսնական այդ ինստիտուտների, այն է՝ փեսայի ընծայի և հարսի օժիտի միջև առկա է եղել էվոլյուցիոն փոխակերպումային գործընթաց և, ըստ ամենայնի, հատուկ է եղել ոչ միայն հայերին, որը կարող էր հեշտությամբ մեկնաբանվել որպես վերջինների վրա Արևելքի իրավական և ամուսնական սովորույթների ու մշակույթի ազդեցություն, այլ տիրապետող է եղել նույն արևմտաեվրոպական միջավայրում ևս: Կարծում ենք՝ պատահական չէ այն, որ իտալական իրականության մեջ գերմանական *Morgengabe*-ից հռոմեական *dos*-ին անցումը տեղի է ունեցել հենց XII դարում, երբ Կիլիկիայում ևս տեղի էին ունենում իրավական խորքային ձևափոխումներ:

<sup>11</sup> Н. Адонц, *Армения в эпоху Юстиниана*, Ереван, 1971, с. 193.

<sup>12</sup> L. Balletto, *Notai Genovesi in Oltremare*, A. № 14, B. № 25.

<sup>13</sup> J. Kirshner, *Marriage, Dowry, and Citizenship in Late Medieval and Renaissance Italy*, University of Toronto, 2015, p. 131.

<sup>14</sup> Ա. Սուքիասյան, նշվ. աշխ. էջ 293:

Անդրադառնանք Ա. Սուքիասյանի պնդմանն առ այն, որ Մխիթար Գոշը չէր կարող կիրառել «տուայր» և «պոռյգ» տերմինները, որովհետև նրան այդ ինստիտուտները հայտնի չեն եղել<sup>15</sup>: Ուսումնասիրելով Ն. Ադոնցի երկի համապատասխան հատվածը, որի հիման վրա Ա. Սուքիասյանը ներկայացրել է իր այս տեսակետը, կարելի է նկատել, որ Ն. Ադոնցն այս հարցի ուսումնասիրությունը չի դիտարկել որպես իր աշխատության գլխավոր նպատակ և բավարարվել է միայն կարծիք հայտնելով<sup>16</sup>:

Մխիթար Գոշի (1130-1213) և Սմբատ Սպարապետի (1208-1276) ապրած ժամանակները նույնիսկ որոշ տարիներով համընկնում են և, եթե օժիտին համարժեք «տուայր» և «պոռյգ» տերմինները բյուզանդական իրավունքից փոխառություն են, ապա Մխիթար Գոշի կյանքի օրոք Կիլիկյան Հայաստանի վրա բյուզանդական ազդեցությունն անհամեմատ ավելի էր, քան Սմբատ Սպարապետի պարագայում: Գոշի մոտ նմանատիպ տերմիններ պարունակող հոդվածները մեծ ծավալ են զբաղեցնում, հետևաբար, եթե հարցին մոտենանք այն տրամաբանությամբ, որ դրանք ավելացվել են հետագա խմբագիրների կողմից, ապա կատարելի, որ նրա «Դատաստանագրքի» զգալի հատվածի հեղինակը մեծ առակագիր-իրավագետը չի եղել: Հայտնի է, որ Գոշը, թաքցնելով վարդապետի իր աստիճանը՝ գիտելիքները խորացնելու նպատակով մեկնել է Սև լեռների հոգևոր կենտրոններում ուսանելու և կրկին ստացել վարդապետի աստիճան: Երկար ժամանակ ապրելով Կիլիկյան Հայաստանում, «Դատաստանագրքում» նրա բերած իրավական կետերը պետք է խորապես համահունչ լինեին Կիլիկիո իրականությանը և հասարակական առանձնահատկություններին:

Համադրելով երկու հեղինակների դատաստանագրքերը, ըստ էության, կարելի է հանգել ընդհանուր եզրահանգման, որ Մխիթար Գոշի «Դատաստանագրքը» իր տեսակով կատարել է անցումային դեր եկեղեցական «Կանոնագիրք հայոց»-ի և Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» միջև:

Մխիթար Գոշի և Սմբատի Սպարապետի դատաստանագրքերում իրավական կետերի համեմատական վերլուծությունը կարող է պարզաբանել, թե ինչ դեր է խաղացել ունեցվածքն ամուսնական իրավական կարգավորումներում, ամուսնալուծության պարագայում դրա բաժանումը՝ կախված ամուսնալուծության հանգամանքներից: Օրինակ, Սմբատի մոտ կարգում ենք. «...Ապա թէ ուրդի՝ որ վասն անհնազանդ լինելոյ կնկանն անհանգստութիւն կենայ յիրենց մէջն, նա կու տայ հրամանք արէնքս, որ բաժնին երբ այլ ճարակ չկենայ. եւ տայ էրիկն

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 295-296: Н. Адонц, там же, с. 192:

<sup>16</sup> «Нам кажется, что статьи о проиг и туайр носят влияние киликийского переводного памятника и их следует отнести к наносным элементам судебного Гоша». Н. Адонц, там же, с. 192.

զինչ հետ իր առել լինի ի յինք, որ երթայ էրիկ մի այլ առնու...»<sup>17</sup>: Օրենքն ասում է, որ եթե կնոջ անհնազանդության (նկատի չի առնվում դավաճանությունը) պատճառով ամուսինների միջև անախորժություններ ծագեն, ապա օրենքը թույլատրում է ամուսնալուծություն, եթե այլ ելք չկա: Ամուսինը պետք է վերադարձնի այն ամենը, ինչ կինը բերել է տուն, որպեսզի վերջինս կարողանա մեկ այլ ամուսին ունենալ: Ուշագրավ է, որ այստեղ օժիտ բառը գործածված չէ, այլ նշված է այն ամենը, ինչը կինը բերել է տուն: Կարծում ենք, որ այս պարագայում խոսքը ոչ միայն օժիտի մասին է, այլ ամուսնական կյանքի ընթացքում կնոջ ձեռք բերած ունեցածքի, այլապես հեղինակը կկիրառեր հենց օժիտ բառը, որը նա օգտագործում է այլ օրենքների ձևակերպումների մեջ: Մասնավորապես, կրկին ամուսնալուծությանը վերաբերող հետևյալ կետում. «Եւ թէ ծուռ բան այն է այրն ընդ կինն պղծագործութեամբ հետ այլ ումեք, որ ստուգվի եւ թէ ընդ անասուն մեղանչէ. եւ թէ ի քրիստոնէութենէն ելնէ, եւ ճշմարտի, որ չլինի ըզորդ ի հաւատն, զայս չկենայ՝ նա բաժնվի իրաւնաւք, եւ զկէս պռուզացն (ընդգծումը՝ Զ. Գ.) առնու այն որ բաժնվի»<sup>18</sup>: Այսինքն, ամուսնալուծության այս պարագայում արդեն Սմբատ Սպարապետը հստակ նշում է «պռուզ» տերմինը, որը, ինչպես վերը նշեցինք, հունարեն նշանակում է օժիտ և, ըստ ամենայնի, փոխառված է բյուզանդական իրավունքից:

Շարունակելով Սմբատի «Դատաստանագրքի» նախորդ օրենքի քննությունը, կարողում ենք մեր ուսումնասիրության համար շատ կարևոր հետևյալ մասը. «...**Զի թէպէտ եւ յառաջի կանոնքն չկայր** (ընդգծումը՝ Զ. Գ.) այս որ կարէ վասն անհնազանդութեան թողուլ, բայց յետեւ վասն անճարակութեան, որ տեսան, որ մեծ վզէն կայր ի ծայրն, նա զայս թուլցուցին...»<sup>19</sup>: Այսինքն, հեղինակը շեշտում է, որ, թեև սկզբնական կանոնում չի եղել ամուսնական վեճերի հիման վրա բաժանման թույլտվություն, սակայն իր «Դատաստանագրքում», հաշվի առնելով, որ ընտանիքում կարող է առաջանալ ծայրահեղ իրավիճակ, ինչը կարող է մեծ ողբերգության պատճառ դառնալ, այս կետով ամուսնալուծությունը թույլատրվում է: Այս խնդրի պարզաբանումը հատկապես կարևոր է, քանի որ Սմբատի «Դատաստանագրքի» վերոնշյալ կետը, որտեղ հեղինակը հատուկ շեշտում է նախորդ կանոնում ընտանեկան սուր վեճերի պարագայում ամուսնալուծությունը թույլ չտալու հանգամանքը («**Զի թէպէտ եւ յառաջի կանոնքն չկայր**»), ինչն արդեն իր հեղինակած օրենսգրքում փոփոխության է ենթարկում և թույլատրում ապահարզան: Այն, որ իրավական այս կետը Սմբատ Սպարապետի կողմից օրենքների աշխարհիկացման գործընթացի մասնավոր ցայտուն օրինակ է, կհիմնավորենք ստորև:

<sup>17</sup> Смбат Спарпет, Сводебник, с. 84.

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 90:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 84:



Սկզբնական ո՞ր կանոնի մասին է վկայում Սմբատ Սպարապետը: Ըստ ամենայնի, նա կարող էր նկատի ունենալ կամ Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»-ը կամ «Կանոնագիրք հայոց»-ը: Գոշի «Դատաստանագրքում» ամուսնական իրավունքին վերաբերող տարբեր կետերի ուսումնասիրության արդյունքում առանձնանում է մի հոդված, որն ավելի, քան մյուսները համադրվում են Սմբատի ձևակերպած վերոնշյալ կետի հետ. «Յորժամ դիակական ախտիւ զմիմեանս այր եւ կին ատիցեն առանց շնութեան պատճառի, եթէ նախ քան զամուսնութիւն իցէ սկիզբն ախտիցն եւ յառնէն իցէ, եւ ոչ կամիցի յարմարիլ ընդ նմա, սահման բաժանման այսհարացն լիցի: Զկնի բազում խրատու եւ յանդիմանութեան քակտիվին, եւ ըստ կանոնաց դատաստանի այրն ոչ իշխէ առնուլ կին եւ կինն լիցի առն՝ տանելով զիրն բաժին եւ յերից զմինն՝ յառնէն, իբր զի անարգեաց զպսակ նորա:

Նոյն դատաստան կացցէ, թէ կնոջէն իցէ, եւ իշխէ առն լինել, բայց եթէ խղճացեալք միմեանց հրամայիցեն: Բայց հրամանաւ եպիսկոպոսին լիցի միմեանց ներելն...»<sup>20</sup>: Հոդվածի վերոշարադրյալ մասում և դրա շարունակության մեջ ասվում է, որ եթե ամուսինները դեռ պսակվելուց առաջ ծայր ատելություն են ունեցել միմյանց հանդեպ, առանց պոռնկության պատճառի, ապա նրանց բաժանելու իրավունքը տրվում է միայն եպիսկոպոսին, որը պետք է միաժամանակ խրատներ տա երկուսին էլ, իսկ նրանք պարտավորվում են վճարել տուգանք, ընդ որում, երկուսն էլ զրկվում են կրկին ամուսնանալու իրավունքից, բացառությամբ, եթե միմյանց թողություն տային: Սակայն, եթե ամուսինների միջև ատելությունը սկսված լիներ պսակվելուց հետո և նրանք այդ պահին զավակ ունենային, ապա ապահարզանին նրանք շատ դժվարությամբ կարող էին հասնել և դրա համար երկար ժամանակ էր պահանջվում: Ընդ որում, ամուսիններից մեկը, որի պատճառով առաջացել էր ընտանեկան խնդիրը, պարտավոր էր իր ունեցվածքի կեսը տալ մյուսին: Եթե համեմատենք ընտանական սուր վեճերին և ամուսինների միջև ատելությանն առնչվող Սմբատի և Մխիթարի բերած հոդվածները, ապա կարելի է հանգել հետևյալ կետերին՝

ա. Երկու դեպքում էլ ապահարզանը մեծ հաշվով թուլլատրված էր, սակայն, եթե Գոշի պարագայում բաժանման ողջ գործընթացն իրականացնում էր եպիսկոպոս-հոգևորականը (...Բայց հրամանաւ եպիսկոպոսին լիցի միմեանց ներելն, յորժամ ի դէպ եւ հաճոյ Տեառն կարծիցէ հրաման տալն...<sup>21</sup>), նա էր սահմանում տուգանքը, մեղավորին, ապա Սմբատի դեպքում՝ հոգևորականի դերը

<sup>20</sup> Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 39:

<sup>21</sup> Նոյն տեղում, էջ 39:

համեմատաբար ավելի է և սահմանափակվում է զուտ բաժանմանն իր համաձայնությունը տալով և տուգանք վճարելով... Ապա թէ երկուքն իրար հալալ այն են, նա եպիսկոպոսին բաժնին յիրամէ, ու դնէ իրենց կարգ եւ տուգանք...<sup>22</sup>):

բ. Երկու հեղինակների մոտ ընտանեկան վեճերի պատճառով ամուսնալուծության դեպքում ունեցվածքի բաժանումը գրեթե նույնն է, սակայն Սմբատ Սպարապետի պարագայում այն ավելի մանրամասն է ներկայացված: Օրինակ, եթե երկու ամուսինները միմյանց ատում են, այն է՝ երկուսն էլ մեղավոր են դրանում, ապա. «... կինն առնու յայրկէն զիր ամէն պոռքն ու զմահրն<sup>23</sup>, եւ երթայ առնու իր այրիկ» (կինը կարող է վերցնել իր բերած օժիտը և հարսանեկան՝ այդ թվում ամուսնու նվիրած նվերները), սակայն եթե կինն է մեղավոր վեճերում, ապա ամուսինը նրան ոչինչ չի թողնում, նույնիսկ՝ օժիտը: Միաժամանակ, տղամարդ-ամուսնու մեղավորության պարագայում վերջինը պետք է մուծի տուգանք՝ օժիտի 1/3-ի չափով, եթե ամուսնացած է եղել կույս կնոջ հետ, եթե ոչ, ապա ոչինչ պարտավոր չէ մուծել<sup>24</sup>:

Ըստ էության, այն, որ երկու հեղինակների դատաստանագրքերում էլ ապահարզանը, որոշակի տարբերություններով հանդերձ, թույլատրված է եղել, վկայում է այն մասին, որ Սմբատ Սպարապետի հիշատակած՝ նախկին ինչ-որ կանոնը, ըստ որի՝ ապահարզանը ընտանեկան վեճերի պարագայում թույլատրված չէր, ամենայն հավանականությամբ կարող էր լինել միայն «Կանոնագիրք հայոց»-ից, որտեղ, իսկապես, այն էլ ընտանեկան վեճերի պարագայում, ամուսնալուծության մասին խոսք չկա:

Իր տեսակով բացառիկ է Սմբատ Սպարապետի «Վասն ամուլ կնոջ» հոդվածի մի կետ, որն, ըստ էության, ալիմենտի ձևակերպման բացառիկ օրինակ է: Դրանում ասվում է, որ, եթե կին-ամուսինը չբեր է և տղամարդ-ամուսինը ցանկանում է բաժանվել, կինն էլ, իր հերթին, չի ցանկանում այլևս ամուսնանալ, ապա տղամարդ-ամուսինը պարտավորվում է սննդով և հագուստով ամբողջությամբ, ցմահ ապահովել կնոջը: Ընդ որում, օժիտը կինը վերցնելու էր իր հետ<sup>25</sup>:

<sup>22</sup> СМБАТ СПАРАПЕТ, *Судебник*, с. 87.

<sup>23</sup> Մահր – ամուսնական նվեր, արաբերեն՝ mahr: Թեև Ա. Գալստյանի կարծիքով, սա այն նվերներն են, որոնք փեսացուն տալիս է հարսնացուին՝ որպես փրկագին, սակայն կարծում ենք, որ փրկագինը պետք է որ տրվեր ոչ հարսնացուին, այլ, օրինակ, նրա ծնողներին, հետևաբար՝ մահրը ներկայացնել որպես դասական առումով փրկագին, համարժեք չէ, քանի որ այդ նվերը կամ նվերները տրվել են հենց հարսնացուին: СМБАТ СПАРАПЕТ, *Судебник*, с. 188:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 87:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 89:

Խոսելով զարգացած միջնադարը բնորոշող միտումների մասին՝ նկատենք, որ ինչպես արևմտավրոպական իրականության մեջ, այնպես էլ Կիլիկյան Հայաստանում իրավունքի ինստիտուցիոնալ ձևափոխումները փաստորեն ակտիվ փուլ մտան համաժամանակյա՝ XII դ. վերջ և XIII դ., որի առավել ցայտուն վկայություններն են «Մագնա կարտան»՝ Անգլիայում և Մխիթար Գոշ-Սմբատ Սպարապետ տանդեմը Կիլիկյան Հայաստանում: Ակնհայտ է, որ իրավական համակարգի նման փոփոխությունները պայմանավորված էին ինչպես եվրոպայում, այնպես էլ Կիլիկյան Հայաստանում դեռ մինչև XIII դ. և դրանից հետո տեղի ունեցող սոցիալ-տնտեսական արմատական փոփոխություններով: Միջազգային առևտրի կտրուկ զարգացումն ու իտալական քաղաքներում բանկային համակարգի շնորհիվ ձևավորվող ֆինանսադրամական նոր տեսակի հարաբերությունները փոխում էին միջավայրը, մարդկանց համակեցություն ձևն ու բովանդակությունը, որոնց կանոնակարգումը մինչ այդ եղած ավանդական իրավական գործիքներով անհնար էր դառնում: Ուստի հասունացող միջավայրին համարժեք իրավունքի, նոր օրենքների կազմումը դառնում էր օրակարգային խնդիր: Կիլիկյան Հայաստանի կառավարող վերնախավի կողմից այս իրողության գիտակցումն ու համակարգային դաշտ բերելու հիմնական ուղին պետական նոր օրենսգրքերի ստեղծումն էր էր, ինչի վկայություն են բազմիցս վկայակոչված դատաստանագրքերը: Իհարկե, կառավարման նման մոտեցումները հնարավոր չէր լինի ներդնել իրավագիտակցության որոշակի հասունություն չունեցող միջավայրում, ինչը վկայում է Կիլիկիայում մինչ այդ արդեն գոյություն ունեցող իրավունքի հստակ ավանդույթների մասին: Մյուս կողմից, Կիլիկիայում հայությունն ինքն էր հայտնվել համեմատաբար նոր միջավայրում, որտեղ ձևավորվում էին սովյալ ժամանակի սոցիալ-տնտեսական, հասարակական հարաբերությունների ամենաառաջադեմ ձևաչափերն ու բանաձևերը, ուստի սեփական ներքին համակեցական մշակույթի հետ դրանք սինթեզելը դառնում էր ինչպես պետության վերնախավի գիտակցված խնդիր, այնպես էլ հասարակ բնակչության առօրեականության ու կենցաղի մի մաս:

ZOHRAH GEVORGYAN

**THE DOWRY AND THE DIVISION OF MARITAL PROPERTY  
IN THE LEGAL DOCUMENTS AND EVERYDAY LIFE OF THE KINGDOM OF  
CILICIAN ARMENIA**

**Keywords:** Dowry, medieval law, Cilician Armenia, Smbat Sparapet, Mkhit'ar Gosh, marital property, capital, private property, Venice, Genoa.

The dowry and the issue of marital property are components characterizing the culture of medieval everyday life and marital law, which are expressed in various ways in both medieval European (Roman law, Magna Carta, the Assizes of Antioch and Jerusalem in the Crusader States) and Oriental legal systems.

In this case, we are talking about the circumstances conditioned by feudal relations of the High Middle Ages, where the role of private property, including marital property, had become more important over time in both legal documents and codes, and in everyday life. Marriage, as a legal institution, had also played an important role in the culture of Cilician Armenia.

This is evidenced by the state codes applied in Cilicia, the Codes of Mkhitar Gosh and Smbat Sparapet, in which numerous articles on marriage law are included. The marital regulations contain issues which had particular emphasis on the dowry and marital property, especially when even the divorce existed as an institute and was regulated by them.

What was the dowry of women from different classes in Cilician Armenia, what legal formulation and significance did it receive in codes, notarial acts, and other legal documents? What was the significance of the property in the marital legal arrangements, and in the case of divorce, how was it divided depending on the circumstances of the divorce? Since there are numerous evidences in the sources about cases of marriage between Armenian women and foreigners in Cilician Armenia, especially those of "Italian" descent, we also considered it important to study what legal arrangements were used in such cases. Were they regulated by the aforementioned Codes which became State Codes in Cilicia at different times, or, depending on the origin of a foreigner, by the internal community laws governing the Venetian, Genoese, and other communities established in the Cilician cities? The study of those issues related to the legal regulation of the dowry and marital property will make it possible to make the history of everyday and marital life in Cilician Armenia more vivid. In this context, it is also possible to have some general insights into the social perceptions of private property and its legal formulations in Armenian Cilicia.

**ЗОГРАБ ГЕВОРГЯН**

**ПРИДАНОЕ И РАЗДЕЛЕНИЕ СЕМЕЙНОГО ИМУЩЕСТВА  
В ЮРИДИЧЕСКИХ ДОКУМЕНТАХ И ПОВСЕДНЕВНОЙ ЖИЗНИ  
КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ**

**Ключевые слова:** Приданое, средневековое право, Киликийская Армения, Смбат Спарапет, Мхитар Гош, семейная собственность, капитал, частная собственность, Венеция, Генуя.

Проблема приданого и семейной собственности характеризуют культуру сосуществования в средневековой повседневной жизни и брачное право, которые по-разному выражаются в европейских и в восточных правовых отношениях. В данном случае речь идет об обстоятельствах, обусловленных феодальными отношениями развитого средневековья, где роль частной, в том числе семейной собственности со временем стала более заметной как в юридических документах и кодексах, так и в повседневной жизни. Брак, как правовой институт, также сыграл важную роль в культуре Киликийской Армении. Об этом свидетельствуют государственные кодексы, применяемые в Киликии, т.е. кодексы Мхитара Гоша и Смбата Спарапета, в которых имеются многочисленные статьи о брачном праве. В нормах брачного права содержались пункты, в которых особое внимание уделялось приданому и семейному имуществу, особенно в случаях, если в этих кодексах предусматривался и регулировался развод. Каким было приданое женщин из разных классов в Киликийской Армении, какую юридическую формулировку и значение оно получило в кодексах, нотариальных актах и других правовых документах? Какое значение имела собственность в брачно-правовых договоренностях, а в случае развода – как она делилась в зависимости от обстоятельств развода? Поскольку в источниках имеются многочисленные свидетельства о случаях браков армянских женщин и иностранцев в Киликийской Армении, особенно браков с лицами “итальянского” происхождения, мы также посчитали важным изучить правовые механизмы, используемые в подобных случаях. Регулировались ли они вышеупомянутыми кодексами, которые в разное время были государственными в Киликии, или, в зависимости от происхождения иностранца, внутренними законами венецианских, генуэзских и других общин, сложившихся в киликийских городах? Изучение упомянутых вопросов, связанных с правовым регулированием приданого и семейного имущества, позволит наглядней представить историю повседневной жизни Киликийской Армении и реалии семейной жизни. В этом контексте можно получить и общее представление о том, как социум Киликийской Армении воспринимал частную собственность и ее правовое оформление.